ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ASSESSMENT AND TESTING CENTER"

STATE NON TRADE ORGANIZATION

ք.Երևան, Չայլախյան 4

Հեռ. 57 63 37,

E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4,Yerevan

Tel. 57 63 37,

03.12.2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Քիմիա» առարկայի ուսուցիչների կամավոր ատեստավորման բողոքարկման հանձնաժողովի լրացուցիչ որոշման

2025թ. դեկտեմբերի 3-ին կայացավ «Քիմիա» առարկայի բողոքարկման հանձնաժողովի լրացուցիչ նիստ: Քննարկվեց նմուշային թեստի 17-րդ առաջադրանքը՝ « **Ո՞ր պնդումներն են ճիշտ տոլուոլի վերաբերյալ.**» առաջադրանքը կազմված է 7 պնդումից, և պահանջվում է գտնել ճիշտ պնդումները: Քանի որ այս առաջադրանքի տեսակի մասին ուղեցույցում չի նշվում, հանձնաժողովը որոշեց այդ առաջադրանքի համար միավոր չստացած բոլոր ատեստավորվողներին հատկացնել մեկ միավոր:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ASSESSMENT AND TESTING CENTER"

STATE NON TRADE ORGANIZATION

ք.Երևան, Չայլախյան 4

Հեռ. 57 63 37,

E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4,Yerevan

Tel. 57 63 37,

18.11.2025թ .

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025թ. նոյեմբերի 8-ին կազմակերպված «Աշխարհագրություն», «Ինֆորմատիկա» և նոյեմբերի 9-ին կազմակերպված «Քիմիա», «Շախմատ», «Տեխնոլոգիա», «Ֆրանսերեն» առարկաների ուսուցիչների կամավոր ատեստավորման բողոքարկման հանձնաժողովների նիստի որոշումների

2025թ. նոյեմբերի 17-ին կայացավ «Աշխարհագրություն», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Տեխնոլոգիա», «Ֆրանսերեն» առարկաների, նոյեմբերի 18-ին՝ «Շախմատ» առարկայի բողոքարկման հանձնաժողովների նիստը:

«Ինֆորմատիկա» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. բոլոր առաջադրանքների պատասխանները մնում են նույնը, որևէ ատեստավորվողի միավոր փոփոխության չի ենթարկվում:

«Ֆրանսերեն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. բոլոր առաջադրանքների պատասխանները մնում են նույնը, որևէ ատեստավորվողի միավոր փոփոխության չի ենթարկվում:

«Քիմիա» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. բոլոր առաջադրանքների պատասխանները մնում են նույնը, որևէ ատեստավորվողի միավոր փոփոխության չի ենթարկվում:

«Տեխնոլոգիա» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց.

1) «Մանեքեն» բառի թարգմանության վերաբերյալ առաջադրանքը չունի ճիշտ պատասխան: Այս առաջադրանքից միավոր չստացած բոլոր ատեսատվորվողներին տալ մեկ միավոր:
2) «Հորիզոնական պրոյեկտող AB հատվածի երկարությունը 10 մմ է: Որքան կլինի AB հատվածի երկարությունը հորիզոնական H հարթության վրա ուղղանկյուն

պրոյեկտման դեպքում» հարցին որպես ճիշտ պատասխան «10 մմ» տարբերակը նշած բոլոր ատեստավորվողներին տալ մեկ միավոր:

3) Մյուս առաջադրանքների պատասխանները մնում են նույնը, որևէ ատեստավորվողի միավոր փոփոխության չի ենթարկվում:

«Աշխարհագրություն» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց.

4) ներկայացված նմուշային թեստի 16-րդ առաջադրանքում (երկրի մակերևույթի վրա ըստ մասշտաբի՝ իրարից մեծ հեռավորություն ունեցող 2 կետերի միջև իրական հեռավորության մասին) որպես ճիշտ պատասխան երկրի մակերևույթի երկու կետերի միջև հեռավորությունը կիլոմետրի փոխարեն սանտիմետրով հաշվարկած և 370.000.000 նշած ատեստավորվողներին տալ մեկ միավոր:
5) Ներկայացված նմուշային թեստի 17-րդ առաջադրանքում (հասարակածի և միջօրեականի մեկ աստիճան աղեղի երկարության մասին) հասարակածի և միջօրեականի մեկ աստիճան աղեղի երկարությունը ոչ թե ամբողջ թվերով, այլ տասանորդական թվերով հաշվարկելու դեպքում խնդրի լուծումը 890 ստացած ատեստավորվողներին տալ մեկ միավոր:
6) Ներկայացված նմուշային թեստի 37-րդ առաջադրանքում (Սյունիքի մարզի վերաբերյալ պնդումների փնջի երրորդ կետում հունվարի միջին ջերմաստիճանի մասին) ձևակերպման մեջ տեխնիկական վրիպակ է եղել, աստիճանի նշանի փոխարեն տրվել է զրո թվանիշ: Բոլոր ատեստավորվողներին, որոնք չեն ընտրել «0-10» տարբերակը, տալ մեկ միավոր:
7) Մյուս առաջադրանքների պատասխանները մնում են նույնը, որևէ ատեստավորվողի միավոր փոփոխության չի ենթարկվում:

«Շախմատ» առարկայի բողոքարկման հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց. բոլոր առաջադրանքների պատասխանները մնում են նույնը, որևէ ատեստավորվողի միավոր փոփոխության չի ենթարկվում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ